

Յ Ո Վ Ն Ա Ն Դ Ա Ի Թ Ե Ա Ն ^{*})

(ՅՈՒՇԵՐ ԱՆՅԵԱԼԻՅ)



Հեռաւոր երկնքի տակ, հեռո՛ւ այն երկրից ու ժողովրդից, որոնց վերածնման համար նա չէր խնայել իր հոգու ու մտքի ամբողջ կարողութիւնը, կնքեց իր մահկանացուն հին սերնդի ամենալաւ ու համակրելի ներկայացուցիչներից մէկը — Յովնան Դաւթեանը:

Ով ճանաչում էր նրան, ով ատիթ է ունեցել աշխատելու նրա հետ հասարակական ասպարէզում, ով, վերջապէս, չփսկել է նրա հետ առօրեայ կեանքի շրջանում, չի կարող չզղալ խորին վիշտ ու ցաւ, միանգամայն անկախ այն հանդամանքից՝ համակիր թէ հակառակորդ է նրա դաւանած դադափարներին:

Որովհետեւ Յովնան Դաւթեանը հասարակական դործիչ էր բա՛ռիս լայն իմաստով, նա ապրում էր այդ կեանքով, մոռնալով իրենը, անձնականը: Աւելացրէ՛ք այդ բոլորին եւ այն, որ նրա անկեղծութիւնն ու մաքրութիւնը վեր էին որ եւ է կասկածից:

Երկար տարիներ առանց ցուցադրութիւնների ու անադմուկ նա քարոզել է իր դաւանած դադափարները անկեղծ շեշտով եւ խօսքը նրա համար չի եղել մի անպատասխանատու, դատարկ հնչիւն. ընդհակառակն, նա ձգտել է իր դադափարները իրականացնել կեանքի մէջ, հասարակական եւ թէ մասնաւոր կեանքի շրջանակում:

Եւ իրաւամբ նա վայելել է մեծ համակրանք թէ՛ ընկերների շրջանում եւ թէ՛ այն վայրերում, որտեղ նա աշխատել է:

*

*) Քսան տարի առաջ, 1920 թ. Օգոստոսին մեռաւ Հ. Յ. Դաւնակցութեան առաջին սերնդի ամենակամաւոր գործընկերից մէկը՝ Յովնան Դաւթեանը: Կարծում եմք, որ այդ գաղափարապաշտ մտաւորականի եւ անձնէր յեղափոխականի յիշատակը լաւագոյնս յարգած կը լինեմք, եթէ «Վեմ»-ի էջերում վերերատարակեմք իր մտերիմ ընկեր եւ գործակից Իշխան Յովսէփ Արզուրեանի յուշերը, որոնք՝ ժամանակին լոյս տեսան Թիֆլիսի «Հորիզոն» քերթում: Այդ յուշերի մէջ կան եւ պատմական քանգաթէ՛ք տեղեկութիւններ, որոնք պատկերացնում են ինքնակամ քաւականների մեր յեղափոխականների կեանքն ու գործը: ԽՄԲ.

Վերջին անգամ եւ նրան տեսայ Թիֆլիսում, երբ նորից վերադառնում էր ժընեւ իր կնոջ, Տիկ. Հորտանսի հետ, որը նրա կեանքի ուղեկիցը եւ անբաժան ընկերն է եղել:

— Բժիշկները պահանջում են, որ մի առժամանակ երկուսս էլ թողնենք ամէն պաշտօն. մեզ անհրաժեշտ է կանոնաւոր բժշկութիւն եւ հանգիստ, այլապէս հիւանդութիւնն էլ սպառնական կերպարանք կարող է ստանալ: Ես շատ եմ վախենում, որ Հորտանսի դրութիւնը ծանրանայ — աւելացնում էր նա, — մոռանալով, որ իր հիւանդութիւնը (թոքերի) նոյնքան սուր կերպարանք է առել, ինչպէս եւ Հորտանսինը:

Մի եղակի մտերմութիւն եւ դադարարական զգացմունք կարծես միացրել էր այդ զոյղին եւ կազմել մի ամբողջութիւն՝ հակումների, բնաւորութեան եւ ձգտումների: Այդ է պատճառը, որ չի կարելի խօսել Յովնանի մասին եւ չլիշել Տիկ. Հորտանսին. նրանք անբաժան էին: Որքան Հորտանսը սիրում էր Յովնանին, նոյնքան տածում էր անկեղծ սէր դէպի այն ժողովուրդը, որի արժանաւոր դաւակներից մէկն էր Յովնանը: Երկուսն էլ մտաւոր լայն պատրաստութեամբ, սակայն երկուսն էլ վերջին ծայր համեստ ու բարի:

Ինչպէս Յովնանի համար Զւիցերիան դարձել էր երկրորդ սիրելի հայրենիքը, այնպէս հայ բարբառը Տիկ. Հորտանսի համար դարձել էր երկրորդ սիրելի մայրենի լեզու: Կարճ ժամանակամիջոցում նա կատարելապէս իւրացրել էր հայերէն լեզուն եւ այդ համակրելի գիցերուհու շրթունքներից երկրորդ մայրենի լեզուն հընչում էր այնքա՞ն քաղցր ու յստակ, այնքան դուրեկան, որ խօսակիցը երբեք չէր ուզում ընդհատել նրան: Աշխատակցում էր հայ թերթերին, թարգմանութիւններ էր անում եւ զրադոււմ գրական աշխատանքով: Տիկ. Հորտանսը պաշտօնավարել է մեր միջնակարգ դպրոցներում, Թիֆլիսի Կենտրոնական Վարժարանը, ուր մեծ համակրանք էր ձեռք բերել հասարակութեան եւ մանաւանդ աշակերտութեան կողմից:

Յողնած երկարատեւ պաշտօնավարութիւնից եւ հասարակական դործունէութիւնից, նրանք դնում էին Զւիցերիայի ջինջ երկնքի տակ կադդուրեւելու, առողջանալու, որպէսզի նոր եռանդով ու թափով նորից նետեն հասարակական դործունէութեան ասպարէզ: Սակայն, անողոք բախտը ուրիշ կերպ էր տնօրինել: Հորտանսի մահից յետոյ մի տարի միայն կարողացաւ ապրել Յովնանը եւ յաւիտենական հանգիստը գտաւ իր երկրորդ հայրենիքում, Հորտանսի հայրենիքում եւ նրա չրիմին կից:

*

Տանք Յովնանի համառօտ կենսագրականը:

Յովնանը ծնւել է 1865 թ. Շուշում: Տեղական թեմական դըպրոցն աւարտելուց յետոյ նա մտնում է Թիֆլիսի Ներսիսեան դըպրոցը եւ 1886 թ. աւարտելով՝ հրաւիրւում է Աստրախան ուսուցչի պաշտօնով: Այստեղ մի տարի մնալուց յետոյ, մեկնում է Ժընեւ եւ հետեւում է համալսարանի հասարակական գիտութիւնների ճիւղին: 1891 թ. վերադառնում է Կովկաս եւ գնում Թաւրիզ՝ ստանձնելով Լիւաւայի երկսեռ դպրոցի տեսչի պաշտօնը:

Երկու տարւայ պաշտօնավարութիւնից յետոյ, Յովնանը նորից վերադառնում է Ժընեւ իր ուսումը շարունակելու համար: Բացւում է Յովնանի համար դործունէութեան նոր ասպարէզը: Նա աշխատում է Եւրոպայի ուսանողական շրջաններում: Մի քանի տարի վարում է Հ. Յ. Դաշնակցութեան օրդան «Դրօշակ»-ի խմբագրի պատասխանատու պաշտօնը: 1898 թ. նորից հրաւիրւում է Թաւրիզ նորարաց թամարեան դպրոցի ուսուցչի պաշտօնով, իսկ Հորտանսը որպէս վարժուհի նոյն դպրոցում: 1900 թ. նորից գնում են Ժընեւ, ուր մի տարի մնալուց յետոյ վերադառնում են Թիֆլիս, որտեղ Յովնանը զբաղւում է կուսակցական աշխատանքներով, իսկ Հորտանսը վարժուհու պաշտօն ունէր Յովնանեան դպրոցում:

1905 - 6 թ. ազատութեան օրերին Յովնանը նորից անցնում է զրական աշխատանքի, որպէս խմբագրութեան անդամ «Յատաջ» եւ սրան յաջորդող թերթերի: Հայ - թաթարական ընդհարումների սեւ օրերին Յովնանը մեկնում է իր ծննդավայրը՝ Շուշի եւ մեծապէս նպաստում երկու հարեւան ժողովուրդների լարւած յարաբերութիւնների մեղմացման: Նա հանդէս է դալիս միտինդներում, ժողովներում եւ իրեն յատուկ անկեղծութեամբ հրաւիրում երկու կողմերին ապրել համերաշխութեամբ:

1908 թ. Յովնանը նորից հրաւիրւում է Թաւրիզ նորարաց Կենտրոնական Վարժարանի տեսչի պաշտօնով եւ 1913 թ. Հորտանսի հետ մեկնում Ժընեւ, վերջին անգամ:

*

1892 թւականը մի նոր շրջան է կազմում Դաշնակցութեան պատմութեան մէջ: Երկու տարի էր լնչ կուսակցութիւնը պաշտօնապէս գոյութիւն ունէր, սակայն կուսակցութեան ծրագիրը եւ դործունէութեան եղանակը կուսակցութեան Ընդհանուր Ժողովի հաւանութիւնը եւ վաւերացումը չէր ստացել: Եւ այդ տեղի ունեցաւ 1892 թ. ամառը Թիֆլիսում, ուր կայացաւ առաջին ռայոնական ժողովը:

Քրիստափոր Միքայէլեանը, Սիմոն Ջաւարեանը և տողերէս զըրողը նոր էինք վերադարձել մեր աքսորավայր Քիչնեւից և Կուսակցութեան յանձնարարութեամբ պատրաստել մեր ապագայ գործունէութեան նախագիծը:

Առաջին անգամ Կովկասի, Ռուսաստանի, Պարսկաստանի քաղաքներէց և և ալ հեռաւոր վայրերէց պիտի դուժմարէին գործող ընկերները և մարմինների ներկայացուցիչները և ապագայ կադմակերպութեան հիմունքները մշակէին: Այդ պատմական ժողովի մասին երկար զրելլ այժմ դուրս է իմ նպատակից, սակայն պիտի վերլուծեմ այն չափով, որ չափով կապուած է Յովնան Դաւթեանի հետ:

Ժողովը բաղմամարդ էր և արմկալի: Մենք ունէինք ներկայացուցիչներ ոչ միայն Կովկասի, Ռուսաստանի, Պարսկաստանի զըլխաւոր կենտրոններէց, ալ և Տաճկա - Հայաստանից: Յովնան Դաւթեանը եկել էր Ատրպատականի կողմից:

Երկու խոշոր հոսանքներ հանդէս եկան ժողովում իրենց ուրոյն աշխարհայեացքով և գործելակերպով: Մի հոսանքը պնդում էր. — Մեր ապագայ գործունէութեանը պիտի տալ միմիայն քաղաքական պայքարի ընդթ՝ անտես առնելով բոլոր անտեսական - սոցիալական հարցերը: Միւս հոսանքը պնդում էր, որ քաղաքական պայքարի հետ զուգընթացաբար պիտի խիստ պրոպագանդ մղել անտեսական - սոցիալական հարցերի շուրջը ոչ միայն հայ գիւղացիութեան, ալ և հարեւան ազգերի — տաճիկների, ասորիների, քիւրդերի — աշխատաւոր զանգւածները մէջ և ալ ուղղութեամբ համերաշխութեան հող պատրաստել:

— Ես չեմ թոյլ տայ, որ քիւրդ ուսյեայի, քիւրդ աշխատաւոր գիւղացու քիթը արնի, չեչտակի ու կտրուկ ձայնով պահանջում էր Սիմոն Ջաւարեանը: Այդ պատճառով Ջաւարեանը իր հակառակորդների կողմից «քիւրդի պաշտպան» մականունը ստացաւ:

Յովնան Դաւթեանը Ջաւարեանի համոզուած կողմնակիցներից էր և ամբողջ կեանքում հաւատարիմ մնաց այդ ուղղութեան:

Ժողովը փակւեց. ընկերների մի փոքր խմբակ զժգոհ ընդունւած բանաձեւերից՝ հետագա Դաշնակցութիւնից, և նրանցից մի քանիսը ապագայում հանդէս եկան որպէս Կուսակցութեան կատաղի հակառակորդներ: Իսկ Կուսակցութիւնը զրեւց ամուր, հաստատուն հիմունքների վրա, և ընկերները ժողովից ցրեցին իրենց վայրերը նոր գործունէութեան, նոր զապաւարների իրականացման տենչով: Ինձ վիճակեց Յովնանի հետ վերադառնալ Ատրպատական:

Թաւրիղի Լիլաւայ թաղամասում, ուր աշխատում էր Յովնանն իր ընկերներով, սկսեւ էր մի չտեսնւած, անսովոր նոր կեանք: Դասախօսութիւններ, կիրակնօրեայ ձրի դասընթացներ, երեկոյթներ, վերջապէս, մի շարք կուլտուրական ձեռնարկներ մի թարմ հոսանք էին մտցրել Թաւրիղի քարացած կեանքում:

Ո՞վ էր տեսել, որ Պարսկաստանի հարեմական կեանքի ենթակայ հայ կինը յաճախի թատրոն, ներկայ լինի դասախօսութիւններին եւ երեկոյթներին: Սակայն, Յովնանին յաջողեց խորտակել այդ կապանքները եւ հայ կնոջ մասնակից անել կուլտուրական բարեփոխելին: Այդ ուղղութեամբ Յովնանը ուղղակի պայքար էր մղում աղամարդկանց հետ: Այդպիսի միջավայրում հանդէս գալ եւ կնոջ իրաւունքների պաշտպան հանդիսանալ, հեշտ բան չէր. մի ուրիշին դուցէ քարկոծէին, բայց չէ՞ որ քարոզիչը ամենքից սիրւած Յովնանն էր եւ ժողովուրդը լի վստահութեամբ կատարում էր նրա խորհուրդները:

Քանի դեռում, աւելի ու աւելի խորանում էր ժողովրդի լայն խաւերի համակրանքը դէպի Յովնանը եւ նրա ընկերները, եւ այդ բանին մեծապէս նպաստում էր այն դադափարական համերաշխութիւնը, որը զոյգութիւն ունէր Յովնանի կազմած ուսուցչական խմբի մէջ:

Խումբը՝ բաղկացած 8 - 10 հոգուց՝ ապրում էր մի բնակարանում միասին: Կազմել էին մի փոքրիկ կոմունա եւ վերացրել սեփականութիւնը: Բոլորի ոռճիկները ստանում էր մէկը — ընդհանուր ծախսարարը: Նա էր հոգս տանում ընկերների ուտեստի, հագուստի, ծխախոտի եւ այլ պէտքերի մասին: Ոչ ոք մի շահի ծախսել չէր կարող, որովհետեւ զրամ բացարձակապէս չունէր:

Եւ այսպէս՝ ամբողջ երկու տարի: Պարզ բան է, որ ընդհանուր ծախսարարը պիտի ունենար տնտեսական գործերի հմտութիւն եւ, որքան գիտե՞ս, նա այդ յոյսերը միանգամայն արդարացրել էր:

Յովնանը ընկերական նեղ շրջանում իրականացնում էր իր դաւանած դադափարները. այդ միանգամայն յատուկ էր նրա բնաւորութեան, սակայն ո՞վ կարող էր ենթադրել, որ ընդհանուր ծախսարարի ընդունակութիւններով օժտւած անձը ոչ այլ ոք էր, եթէ ոչ մեր ներկայի խիզախ մարտիկներից մէկը — Նիկոլ Դումանը:

Հասարակութիւնը հետեւում էր խմբի նիստ ու կացին, սակայն ամենից աւելի աչքի էր ընկնում մի ուրիշ երեւոյթ: Ուսուցչիչների բնակարանը մի խորհրդաւոր վայր էր կարծես. գալիս էին ինչ որ անձանք մարդիկ, հիւժւած, յոգնած դէմքերով, յաճախ ցնցոտիների մէջ, մնում էին մի քանի օր եւ նորից անհետանում: — Ուլքե՞ր էին դրանք, հետաքրքրւում էին շատերը:

*

Կուլտուրական աշխատանքի հետ զուգընթացաբար կատարւում էր մի ուրիշ, աւելի ծանր ու զժւարի՛ն՝ դադափարական աշխատանք։ Մեր ազատագրութեան առաջին շրջանն էր՝ լի դադափարական էջերով։ Եւ եկողները նրանք էին, այդ դադափարի սպառաւորները, որոնք զալիս էին հանդիստ դառնելու այդ խորհրդաւոր բնակարանում։

Յոգնա՛ծ, ուժասպառ՝ երկար թափառել է նա Վասպուրականի եւ Տարօնի լեռներում, իր սլարէնն ու հրացանը ուսին՝ օրեր, շաբաթներ քայլել անլիւրջ։ Պարտքի կատարման ճանապարհին յոգնել է նա եւ այժմ զալիս է հանգստանալու իր մտերիմ ընկերների շրջանում։ Նա ճանապարհին եղել մի ուրիշ վայրում, որտեղ նրան ընդունել են նոյնքան սիրալիր։ Դուշմանի ձորի բերանում դառնող հինաւորաց Դերիկի վանքում նա առաջին հանգիստն է առել Թաւաքալեան վարդապետի մօտ։ Այժմ զալիս է Թաւրիզ, հանգստանալու, թարմանալու եւ նոր հրահանգներ ստանալու։

Ու երբ մտնում է իր ընկերների մօտ, մոռանում է իր կրած բոլոր տանջանքները, — է՞՞ որ այնտեղ, զուլումի աշխարհում, ամենազժւարի՛ն բողբոջներին անգամ նա իրեն չէր զգում մենակ, որովհետեւ գիտէր, որ ընկերները իրենց ամբողջ հոգով նրա հետ էին։ Նւիրական անուններ, որոնք այժմ չկան. — Պետօ, Սաքօ, Կարօ (Արիստակէս Զօրեան), Թորոս (Գալուստ Ալոյեան), Նիկոլ — Դուման, Չաթօ, Շէրօ եւ էլի շատերը, շատերը, որոնց կեանքը մեր ազատագրութեան պատմութեան մէջ մի — մի էջ է կաղմելու։ Ահա դրանք էին, որ զալիս էին զուլումի աշխարհից եւ նորից վերադառնում լի յոյսերով, լի հաւատով...։

Երա՛զ օրեր...։

*

Եւ այդ երազ օրերի ստեղծագործողներից մէկը դո՛ւ էիր, սիրելի Յովնան։ Այժմ քնի՛ր անխռով, քնի՛ր հանգիստ։ Որովհետեւ դու քո պարտքը սրբութեամբ կատարեցիր։ Տարաբախտ ցեղիդ ազատագրութեան էջերում դու իրաւամբ քո արժանաւոր տեղը կունենաս։ Քնի՛ր, ուրեմն, խաղաղ, քնի՛ր հանգիստ, սիրելի Յովնան։

ՅՈՎՍԷՓ ԱՐԳՈՒԹԵՍՆ

«Հորիզոն», 1 Սեպտ. 1918 թ.

ԹԻՓԼԻՍ